## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

✦ 6 Մարտ Շբ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Գլխադրի մատրան մէջ, պատարագիչն էր Հոգ. Տ. Գարեգին Վրդ. Վըրթանէսեան։

✦ 7 Մարտ Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր Գողգոթայի մատրան մէջ, պատարագիչն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան։

✦ 11 Մարտ Եշ. — Ս. Վարդանանց. Ամէն. Ս. Պատրիարք Հայրը նախագահեց առաւօտեան պաշտամունքին և ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին. պատարագեց և քարոզեց Գեր. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան, Վարդանանց կրօնական և ազգային դերին ու նշանակութեան շուրջ։

✦ 12 Մարտ Ուրբ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորւոց Ս. Մարկոս Եկեղեցւոյ մէջ, պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան։ Բացատրեց Քրիստոնէութեան առաջին օրերուն հաստատուած աղօթքի զօրութիւնը, և ներգործութիւնը նորակազմ եկեղեցիին վրայ։

✦ 13 Մարտ. Շբ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Գլխադրի մատրան մէջ, պատարագիչն էր Հոգ. Տ. Գարեգին Վրդ. Վըրթանէսեան։

✦ 14 Մարտ Կիր. — Բուն բարեկենդան. Ամէն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին՝ ի Ս. Յակոբ, պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան։

✦ 15 Մարտ Բշ. — Ա. օր Մեծ պահոց. Ամէն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ առաւօտեան պաշտամունքին եւ պատրիարքարանի սրահին մէջ ընդունեց պատ. Միաբանութեան Մեծ պահոց շնորհաւորութիւնը։ Իր փոխադարձ շնորհաւորական խօսքերով՝ կոչ ըրաւ բոլորին որ ամենազգաստ արթնութեամբ և նուիրումով դիմաւորեն իրենց պարտականութիւնները, որպէսզի Ս. Աթոռը՝ իր բոլոր հաստատութիւններով անվտանգ մնայ Պաղեստինի ներկայ քաղաքական տագնապալի միջոցին։

✦ 17 Մարտ Դշ. — Գ. օր Մեծ պահոց. Ամէն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ առաւօտեան պաշտամունքին։

✦ 19 Մարտ Ուրբ. — Ամէն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ երեկոյեան պաշտամունքին և նախագահեց Ս. Թէոդորոսի նախատօնակին որ կատարուեցաւ ի Ս. Յակոբ։

✦ 20 Մարտ Շբ. — Ամէն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ առաւօտեան պաշտամունքին և Ս. Պատարագին, որ տեղի ունեցաւ ի Ս. Յակոբ, պատարագիչն էր Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Պըճիկեան։

— Երեկոյին Ամէն. Ս. Պատրիարք Հայրը ի գլուխ պատ. Միաբանութեան, պաշտօնական թափօրով Ս. Յարութեան Տաճարը գնաց և «Հրաշափառաւ» մուտք գործեց։ Ս. Գերեզմանի մէջ և առջև կատարուեցաւ ուխտի արարողութիւնը և յետոյ թափօրը մեր Գողգոթայի մատուռը բարձրացաւ ուր և կատարուեցաւ երեկոյեան պաշտամունքը։

✦ 21 Մարտ Կիր. — Բ. Քառասնորդաց — Արտաքսման. Ամէն. Ս. Պատրիարք Հայրը պաշտօնական գնացքով Ս. Յարութեան Տաճարը երթալով նախագահեց առաւօտեան պաշտամունքին որ կատարուեցաւ մեր Գողգոթայի մատրան մէջ, և ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։ Զկնի Ս. Պատարագին Ն. Ամենապատուութիւնը նախագահեց օրուան մեծահանդէս թափօրին և վերադարձաւ պատրիարքարան առաւօտեան՝ պաշտօնական կարգով։

✦ 27 Մարտ Շբ. — Ս. Կիւրղի Երուսաղիմայ հայրապետին. Ամէն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ առաւօտեան պաշտամունքին և Ս. Պատարագին նախագահելով՝ Մանկունքի արարողութեան Ս. Ստեփաննոս մատրան մէջ։ Պատարագիչն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան։ Զկնի Ս. Պատարագին՝ Ն. Ամենապատուութիւնը իր անուան տօնին առթիւ պատ. Միաբանութեան շնորհաւորութիւնը ընդունեց պատրիարքարանի մէջ իր հայրական յորդորներն ու օրհնութիւնները տալով ամենուն։

✦ 28 Մարտ Կիր. — Գ. Քառասնորդաց — Անառակին. Ամէն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ Ս. Պատարագին որ մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ մէջ և նախագահեց հանգ. Յարութիւն Կիւլպէնկեանի և Յակոբ Օշականի հոգեհանգստեան արարողութեան։ Պատարագեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան և քարոզեց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան, նիւթ ունենալով Անառակ որդիին առակը։

✦ 30 Մարտ Գշ. — «Հսկումն»ին քարոզեց Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը, բնաբան ունենալով «Ամէն ամէն ասեմ ձեզ եթէ ոչ ծնցի ոք ի ջրոյ և ի հոգւոյ ոչ կարէ մտանել արքայութիւն երկնից»։ Բացատրելով Տիրոջ այս խօսքին իմաստը, վեր հանեց ապաշխարութեան կարևորութիւնը հաւատացեալի կեանքին մէջ, ներկայացնելով այն բոլոր բարերար և շինարար արդիւնքները՝ որոնք առաջ կուգան քրիստոնէական բարձր նկարագրի ծալքերէն, յօգուտ անհատին և ընկերութեան և յետոյ ալ ազգին։

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.